

### ԱՐԺԵՔԱՎՈՐ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆ

Մեր բազմավաստակ գիտնական, պրոֆեսոր դոկտոր Մանուկ Աբեղյանը, որ համարյա կես դար իրեն նվիրել է հայ ժողովրդական բանահյուսութեան և էպոսի հավաքման ու ուսումնասիրութեան գործին, որ այնքան արժեքավոր աշխատութեաններ և մեծ երախտիքներ ունի այդ ասպարեզում, — այս տարի, Արմֆանի հրատարակութեամբ, լույս բնծայեց մի նոր ուսումնասիրութեան, որը պատիվ է բերում թե՛ իրեն՝ պրոֆ. Աբեղյանին և թե՛ մեր գրականագիտութեանը:

Պրոֆ. Աբեղյանի այս նոր աշխատութեանը, որ կրում է «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» վերնագիրը, ինչպես առհասարակ նրա բոլոր ուսումնասիրութեանները, կատարված է մեծ խնամքով և գիտական լրիվ ապարատով: Բացի ընդարձակ ներածութեանից, դիրքն ունի բացատրութեան տաղերի ուղղագրութեան ու արտասանութեան մասին, ունի ծանոթութեաններ, ուր հմտորեն բացատրվում են հին ոճեր ու ասույթներ, ունի բառարան «ղժվար հասկանալի բառերի» և այլն:

Ներածութեան մեջ պրոֆ. Աբեղյանը խոսում է գուսանական-ժողովրդական տաղերի ծագման, ձևերի, չափերի, լեզվի և նրանց կենսասեր ու կենսուերախ ոգու մասին, որ միանգամայն զերծ է կրոնական-եկեղեցական տրամադրութեաններից: Եվ դա բնական է, որովհետև գուսանները երգում էին կյանքի վայելքը — սեր, կին, դինի, աշխարհիկ ուրախութեաններ: Իսկ եկեղեցին, համաձայն իր ասկետական աշխարհայացքի, այդ բոլորը համարել էր մեղսավոր բաներ և հալածել գուսաններին:

Այնուհետև պրոֆ. Աբեղյանը խոսում է և այն մասին, թե ովքեր են եղել այս սրտագին, անկեղծ, կարճ, բայց անմիջական հույզերով և թարմ, անկրկնելի պատկերներով հարուստ տաղերի հեղինակները. — անհայտ, անանուն գուսաններ, երբեմն գուսանուհիներ, ժողովրդի մարդիկ, որ իրենց դործիքների նվագի հետ միասին իրենց տաղերը երգել են քաղաքների ու գյուղերի խնջույքներում, ժողովրդի համար, և նրանց երգը տեղից-տեղ, շրթից-շուրթ անցնելով՝ կրել է ժողովրդական կրքին հատուկ փոփոխութեանները և խոր հնութեանից դարձել ժողովրդի սեփականութեան: Եվ այդ է պատճառը, որ հաճախ տեսնում ենք՝ միևնույն երգը հանդես է դալիս տարբեր վարիանտներով, մեծ կամ փոքր շեղումներով: Դրանից էլ պրոֆ. Աբեղյանը իրավացիորեն եզրակացնում է, որ գուսանական տաղերը մի հեղինակի գործ չեն, այլ շատ բանաստեղծների և այն էլ, ով գիտե, կավկազներինք մենք, հղկվել ու մշակվել են մի քանի դար շարունակ:

Ապա գրքում պրոֆ. Արեղյանը բերում է այդ վարիանտները՝ նրանց համեմատություններով ու տարբերություններով, կատարելով մի մանրակրկիտ աշխատանք, որ ըստ ամենայնի օրինակելի է և վկայում է հեղինակի սերն ու գիտական բարեխիղճ վերաբերմունքը դեպի իր նյութը:

Երբ թերթում եք ուրախության, սիրտ, հարսանյաց ու պանդխտության հայրենիների և օրորոցի ու լացի անտունիների այս գիրքը, դուք, կարծեք, մանում եք մեր ժողովրդական բանաստեղծության հմայիչ աշխարհը, զգում եք նրա քնարի նուրբ նվագը, նրա զգայուն սիրտը, քրիստոնեական նախապաշարունակներից զերծ լայն հողին, որ երբեք չի հրաժարվիլ կյանքից, այլ ընդհակառակը, երգել ու ներրողել է այդ կյանքը դեռ եվրոպական վերածնությունից շատ առաջ: Երգել անպաճույճ, բայց բանաստեղծական պատկերավոր լեզվով, անսպասելի ու գեղեցիկ համեմատություններով, գյուտերով, թռիչքներով ու սրամտություններով, որոնք բազմազան են, անսպառ և որոնց շատ պոետներ կարող են նախանձել:

Ակսելով գրքի ընթերցանությունը՝ ես, մատիտը վերցրած, նպատակ ունեի նշել առանձնապես գեղեցիկ տաղերը կամ դրանց լավ տողերը. սակայն մի քանի էջից նկատեցի, որ դա ավելորդ աշխատանք է. ես պետք է նշեի բոլոր տաղերը, որովհետև համարյա բոլորն էլ ընտիր են. չկա մեկը, որ չունենա բանաստեղծական բարձր արժանիքներ, պարզություն ու անմիջականություն, որ համակում ու հիացում է ձեզ և դուք նույն տաղը կարգում եք նորից ու նորից, նորանոր գեղեցիկություններ գտնելով նրա մեջ:

Անավասիկ մի տաղ, որի պատկերները կրկնել և կրկնում են հարյուրավոր պոետներ, չիմանալով, որ այդ բոլորն սսված է շատ վաղուց, շատ լավ և շատ խոր.

Աչերդ է ծովէն առած,  
Եվ ուներդ ի թուխ ի ամպէն.  
Այդ քո պատկերքդ և սուրաթդ  
Ի վարդին կարմիր տերեւէն.  
Ուր որ դու կանգնած լինիս,  
Ձէ պատեհ վառեն մոմեղէն.  
Ծոցնդ լույսըն դուրս ծաղէ,  
Գէմ ելնէ մեռելն ի հողէն:

Սիրունու այս պայծառ նկարագիրը եզակի չէ տաղերի մեջ. այսպիսի սիրու հայրենիներ հարյուրավոր են, մեկը մյուսից գունազեղ ու բովանդակալի:

Սիրունու պատկերներից ոչ պակաս գեղեցիկ է տրված և սիրու ուժը՝ նույնպես բազմաթիվ հայրենիներում: Ահա դրանցից մեկը, պատահաբար վերցրած.

— Ե՛ր եկ դու ի քո տանէն,  
Զինչ ելնէ արևն ի մօրէն.  
Ծագէ լույս ի քո ծոցէդ,  
Զինչ գարնան կայծակն ի յամպէն.

Շատ երէց ու արեղայ  
Իջուցեր քո սէրն ի բեմէն.  
Զիս այլ սիրու տէր արիւր  
Ու հանիր իմ հօրն ի տանէն:

Պատկերավորութեան ու զգացմունքների խորութեան կողմից սիրո հայրեններից ոչ մի բանով ետ չեն մտում հարսանյաց և պանգխտութեան հայրենները, որոնց մեջ դարձյալ ցոլանում է ժողովրդի հանճարը՝ իր անմիջականութեամբ ու սրտագրավ պարզութեամբ: Այդ հանճարը մերթ լուրջ է, ծանրախոհ, մերթ այնպիսի խաղեր ունի և երևակայութեան այնպիսի թռիչքներ, որ շատ քիչ պոետներ ունեն: Ընթերցողը, հոգնած միօրինակ, կրկնվող պատկերներից, զարմանում է Մայակովսկու համարձակ համեմատութեանների վրա, ինչպես օրինակ, երբ նա ասում է, թե արևը քորոց անեմ և փողկապս խրեմ: Հիմա տեսեք, թե մեր գուսաններն ինչ պատկեր են ստեղծում.

— Գանի՛ ու քանի՛ ասեմ.  
«Զիմ եարին կապան կարեցէք.  
Արեն իւր երեսք արէք,  
Զլուսընկան աստառ ձեցէք.  
Թուխ ամպն ալ բամբակ արէք,  
Ի՛ի ծովէն դերձան քաշեցէք.  
Աստղերն ալ կոճակ արէք,  
Զիս ի ներս ողկիկ շարեցէք:

Կամ ահա մի այլ հիպերբոլիկ պատկեր.

Ծովը քեզ գինի դառնա,  
Գայմին քեզ կթղա.  
Գյամչին քեզ դոլի բաշի,  
Դու լից, դու անուշ արա...

Մակայն գուսանական-ժողովրդական տաղերի գեղեցկութիւնը, էսթետիկական հաճույքը վայելելու համար պետք է կարգալ այս գիրքը, վերակարգալ և նորից կարգալ: Օրինակները քիչ գաղափար կարող են տալ այն անհուն գեղեցկութիւնների և առատաբուխ զգացմունքների մասին, որ ունեն այս գրքի հարյուրավոր երգերը, որոնց մեջ լիարյուն բաբախում է ժողովրդի մարդկանց պարզ սիրտը, արտահայտվում է նրանց մաքուր սերը, այրող կարոտը, անամպ ուրախութիւնը և ազնիվ թախիծն ու վիշաք:

Մյուս կողմից մենք ավելորդ ենք համարում ասել, որ գուսանական-ժողովրդական այս տաղերը, այդ ամենից բացի, տալիս են նաև ժողովրդի հոգեբանութիւնը, նրա կենցաղը, սովորութիւններն ու բարքերը, որովհետև այդ բանը առատ փաստերով ու օրինակներով հմտորեն ապացուցել է ինքը՝ պրոֆ. Աբեղյանը իր մի այլ նշանավոր աշխատութեան մեջ — «Հին գուսանական ժողովրդական երգեր» գրքում:

Այստեղ մենք կուզենք ընդգծել միայն, որ սլոոֆ. Աբեղյանը իր այս նոր աշխատութեան մեջ դրել է իր երկարամյա փորձն ու հմտութիւնը, իր բարձր ճաշակը և անմար սերը դեպ մեր ժողովրդի բանավոր ստեղծագործութիւնը:

Եվ, իրոք, բարձր ճաշակ ունեցող և իր ժողովուրդը խորապէս սիրող, նրա ստեղծագործութիւնը գնահատող մարդը կարող էր կատարել այսպիսի մանրակրկիտ, բարեխիղճ աշխատանք, ինչպիսին է «Գուսանական-ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» գիրքը:

Ձ հոկտեմբերի 40 թ.

Երեվան

